Արձանագրություն N: 3

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (ԵՊՀ) կարիքների համար կազմակերպված «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/144» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «16» սեպտեմբերի 2020թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ա. Սարգսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ)

հանձնաժողովի անդամներ՝

Ա. Սիմոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

Ռ. Միքայելյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

Ա. Ավետիսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

Ա. Անտաշյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Մկրտչյան՝ (Գնման պատասխանատու/ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄՀՄ)

1. Տեղեկություն՝ «ԵՊՀ- ԳՀԱՊՁ-20/144» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով՝ 2020թ.-ի սեպտեմբերի 16-ին, ժամը 10:00-ին՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 հասցեում:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
1	Դիզելային վառելիք՝ ձմեռային	357000

3.Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները

Մասնակցի անվանումը	Հասցեն և կոնտակտները.
«Ֆլեշ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացու 30, Հեռ.՝ +37410534233

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. **Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**
Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. **Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**
«Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ առկա են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

7. **Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**
«Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

8. **Տեղեկություն՝ մրցույթի արդյունքների ամփոփման մասին.**
Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի և գնային առաջարկի հիման վրա հանձնաժողովը որոշեց որպես ընտրված մասնակից (առաջին տեղ զբաղեցրած) հայտարարել «Ֆլեշ» ՍՊԸ-ին:

9. **Տեղեկություն՝ մրցույթի արդյունքների հրապարակման մասին.**
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից: Հանձնաժողովը հաստատեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարվեց հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և տեղեկացնել մասնակցին, որ նա ներկայցնի պայմանագրի և որակի ապահովումները:

10. **Մասնակցի (մասնակիցների) կողմից առաջարկված գները հետևյալն են.**

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«ՖԼԵՇ» ՍՊԸ		Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
		Գինը առանց ԱԱՀ-ի	Գինը ներառյալ ԱԱՀ-ն	
1	Դիզելային վառելիք՝ ձմեռային	295750	354900	357000

Հանձնաժողովի նախագահ (ԳՊ/ԳԱՊ)՝ Ա. Սարգսյան
ստորագրություն

Բացող անդամներ (ԳՊ/ԲԱ)՝ Ա. Ավետիսյան
ստորագրություն

Ա. Անտաշյան
ստորագրություն

Գնահատող անդամներ (ԳՊ/ԳԱ)՝ Ա. Սիմոնյան
ստորագրություն

Ռ. Միքայելյան
ստորագրություն

Հանձնաժողովի քարտուղար (ՄՀՄ) Ա. Մկրտչյան
ստորագրություն